

**«ՀՈՒՄԿ» ԿՀ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**  
**2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ**

«ՀՈՒՄԿ» ԿՀ Որակի ապահովման կենտրոնը (ՈԱԿ) ստեղծվել է 2012 թվականի սեպտեմբերին հիմնադրամի ներքին որակի ապահովման գործառույթների իրականացման նպատակով:

Համաձայն «ՀՈՒՄԿ» ԿՀ 2015-2020թթ զարգացման ռազմավարական ծրագրի անհրաժեշտ է ՄՈՒՀ-ում ներդնել որակի գնահատման և ապահովման ներքին հավաստման համակարգ՝ եվրոպական և ՈԱԱԿ որակի ապահովման չափորոշիչների պահանջներին համապատասխան: Այդ խնդրի իրականացման համար անհրաժեշտ ուղղություններից է «ՀՈՒՄԿ» ԿՀ կրթական գործունեության ինքնագնահատման չափանիշների մշակումը՝ համաձայն միջազգային հավատարմագրող կազմակերպությունների և մասնագիտական կրթության ՈԱԱԿ հավատարմագրող ստանդարտների:

Կենտրոնի առաքելությունն է աջակցել «ՀՈՒՄԿ» ԿՀ կրթության որակի ապահովմանը և բարելավմանը՝ ՀՀ-ում հաշվապահական կրթության զարգացման, հաշվապահական նորացվող համակարգի ներդրման գործընթացին նպաստելու նպատակով, պահպանելու իր դիրքերը հաշվապահության ուսուցման բնագավառում առաջատար կրթական միջավայր լինելու համար:

ՄՈՒՀ-ի ՈԱԿ-ի պատասխանատու Ա. Առաքելյանը մասնակցել է ՈԱԱԿ-ի «Կրթություն և մասնագետ. մասնագիտական կրթությունն այսօր և վաղը» ծրագրի վերապատրաստման դասընթացներին: Ստեղծվել են «ՀՈՒՄԿ» ԿՀ ինստիտուցիոնալ և ծրագրային ինքնագնահատման աշխատանքային խմբերը, սկսվել են աշխատանքները «ՀՈՒՄԿ» ԿՀ ինստիտուցիոնալ ինքնագնահատման և «ՀՈՒՄԿ» ԿՀ կրթական գործունեության ինքնագնահատման ուղղություններով:

2017-2018 ուստարում «ՀՈՒՄԿ» ԿՀ ՈԱԿ-ի և ուսումնական մասի կողմից մշակվել և Գիտխորհրդի կողմից հաստատվել են հետևյալ կանոնադրական և այլ հայեցակարգային փաստաթղթերը.

- լրամշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «ՄԿԾ Մշտադիտարկամն և վերանայման» կարգը,
  - լրամշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Ուսանողների ակադեմիական շահերի պաշտպանությունն ապահովող» ընթացակարգը,
  - լրամշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Ուսանողների գնահատման» ընթացակարգը
  - լրամշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Ուսանողների ընդունելության» կարգը,
  - մշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Ուսանողների ակադեմիական աշխատանքի կազմակերպման և ակադեմիական օժանդակության» կարգը,
  - մշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Ամբիոնի վարիչի ընտրության» ընթացակարգը
  - մշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Դասախոսական կազմի կատարելագործման և խրախուսման քաղաքականությունը և ընթացակարգը»
  - լրամշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» կարգը
  - լրամշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ կրթական ծրագրի ամբողջական նկարագիրը, որում ներկայացված են ծրագրի և նրա բաղկացուցիչ դասընթացների նպատակը, կրթական վերջնարդյունքները, դասավանդման, ուսումնառության և գնահատման կիրառվող մեթոդները և ուսումնական պլանի քարտեզը,
  - լրամշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ մագիստրատուրայի «Քննությունների և ստուգաթղթերի անցկացման կարգը»
  - լրամշակվել են «ՀՈԻՄԿ» ԿՀ «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ մագիստրատուրայի առարկայական ծրագրերը
  - լրամշակվել է «ՀՈԻՄԿ» ԿՀ «Կրթական ծրագրի մոնիտորինգի վերանայման կարգը»
  - «ՀՈԻՄԿ» ԿՀ-ում Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման» կանոնակարգը:
- ՄՈԻՀ-ի ՈԱԿ-ի կողմից մշակվել և ուսանողների շրջանում անց է կացվել հարցումներ, մասնավորապես «ՀՈԻՄԿ» ԿՀ Ուսումնական միջավայրի, Վարչական և խորհրդատվական ծառայությունների, կարիերայի կենտրոնի աշխատանքների, Կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ, Դասախոսների ինքնավերլուծության հարցաթերթիկներ, կատարվել են համապատասխան վերլուծություններ:
- Դասախոսների շրջանում անց է կացվել ինքնավերլուծության թերթիկների լրացում:

**«ՀՈՒՄԿ» ԿՀ ուսանողների շրջանում կոռուպցիոն դրսևորումների վերաբերյալ  
անցկացրած գրավոր հարցման հաշվետվություն**

«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական հիմնադրամը պարբերաբար երկու տարի տևողությամբ «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերի ուսանողների շրջանում իրականացնում է հարցում՝ Կենտրոնում կոռուպցիայի դրսևորումների վերաբերյալ: Հարցման նպատակն է վեր հանել «ՀՈՒՄԿ» կհ-ում ուսումնառության երկու տարիների ընթացքում ուսանողների կողմից կոռուպցիոն ճանապարհով և բարեխոսությամբ /հովանավորչությամբ/ գնահատականներ ստանալու դրսևորումները, աշխատանքներ տանել կոռուպցիոն կարգի բոլոր դրսևորումները բացառելու ուղղությամբ:

Ըստ այդմ՝ 2018թ. ապրիլ – մայիս ամսիներին ուսանողների շրջանում իրականացվել է գրավոր հարցում՝ պարզելու ուսանողների կողմից «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում նկատված կոռուպցիոն դրսևորումները:

«ՀՈՒՄԿ» ԿՀ ուսումնական մասի և որակի ապահովման կենտրոնի կողմից համատեղ մշակվել է հարցաթերթիկ, վերջինս հաստատվել է ուսումնական գծով փոխտնօրենի կողմից: Հարցաթերթիկը ներառում է երեք հարց, հետևյալ պատասխաններով՝

- այո
- ոչ
- դժվարանում եմ պատասխանել

Երեք հարցերի միջոցով փորձել ենք բացահայտել ուսումնական հաստատությունում կոռուպցիայի միջոցով գնահատականներ ստանալու դեպքերը, կամ դրանց հնարավոր դրսևորումները:

Հարցաթերթիկները լրացվում են անանուն, որը ևս անկողմնակալություն և ազատ արտահայտվելու իրավունք է ենթադրում:

Հարցմանը մասնակցել են Կենտրոնի 2017-2018 ուստարվա մագիստրոս ուսանողներից 32-ը (երեսուներկուսը)՝ 16 (տասնվեց) ուսանող առաջին կուրսից և 16 (տասնվեց) ուսանող՝ երկրորդ կուրսից:

Առաջին հարցին, թե տեղյակ են արդյոք ուսանողները, որ իրենց ուսումնառության ընթացքում ուսանողները գումարի դիմաց ստացել են գնահատական, հարցմանը մասնակցած առաջին կուրսեցիների 100 (հարյուր) տոկոսը պատասխանել են **ոչ**, երկրորդ կուրսեցիներից 99 (իննսունինն) տոկոսը պատասխանել են **ոչ**, 1 (մեկ) տոկոսը՝ **դժվարանում եմ պատասխանել**:

Երկրորդ հարցին, թե արդյոք տեղյակ են, որ իրենց ուսումնառության ընթացքում ուսանողները բարեխոսությամբ /հովանավորչությամբ/ ստացել են գնահատական, առաջին կուրսեցիների 100 (հարյուր) տոկոսը պատասխանել են **ոչ**, երկրորդ կուրսեցիների 99 (իննսունինն) տոկոսը պատասխանել են **ոչ**, 1 (մեկ) տոկոսը՝ **դժվարանում եմ պատասխանել**:

Երրորդ հարցին, թե արդյոք տեղյակ են, որ իրենց ուսումնառության ընթացքում ուսանողները հարկադրված են եղել վճարել մասնավոր պարապմունքների համար գնահատական ստանալու նպատակով, առաջին կուրսեցիների 99 (իննսունինն) տոկոսը պատասխանել են **ոչ**, 1 (մեկ) տոկոսը՝ **դժվարանում եմ պատասխանել**, երկրորդ կուրսեցիների 99 (իննսունինն) տոկոսը պատասխանել են **ոչ**, 1 (մեկ) տոկոսը՝ **դժվարանում եմ պատասխանել**:

Ըստ հարցմանը մասնակցած ուսանողների պատասխանների՝ «ՀՈՒՄԿ» ԿՀ-ում կոռուպցիայի, բարեխոսության կամ հովանավորչության, լրացուցիչ մասնավոր պարապմունքների միջոցով գնահատականներ ստանալը բացառվում է, ուսանողների գիտելիքները գնահատվում են թափանցիկ քննական գործընթացի միջոցով՝ առանց որևէ միջամտության: Դասավանդող դասախոսների միջամտությունը քննական գործընթացին բացառվում է, քննական ընթացքը հսկվում է ոչ մասնագետների կողմից, ուսանողների անձնական տվյալները լրացվում են հատուկ մշակված կտրոնների վրա և միայն վերջում՝ գնահատականների արդյուքներն ամփոփելուց հետո, համապատասխան ամփոփաթեթ-թերում անուն-ազգանունների դիմաց լրացվում է գնահատականը:

«ՀՈՒՄԿ» ԿՀ ուսումնական մասը և ՈԱԿ-ը պատրաստակամ են մշտադիտարկման միջոցով բացահայտելու և վեր հանելու կոռուպցիոն ցանկացած դրսևորում, որն ինքնին ազդեցություն կունենա ուսումնառության որակի բարելավման վրա:

**«ՀՈՒՄԿ» ԿՀ Խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ անցկացրած հարցման վերլուծություն**

ՄՈՒՀ-ը ստեղծել է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու նպատակով:

Ըստ այդմ, ուսանողության 2017-2018 ուստարվա երկրորդ կուրսի ուսանողների շրջանում անց է կացվել հարցում՝ պարզելու թե որքանով են վերջիններս տեղեկացված այդ ծառայությունից և ինչ միջոցներ են հնարավոր ձեռնարկել էլ ավելի բարելավելու ուղղությամբ:

Ուսանողներին բաժանվել է նախապես մշակված և հաստատված հարցաթերթիկ, ներկայացվել է Խորհրդատվական ծառայությունների բնութագիրը, դրանցից օգտվելու հստակ կանոնակարգն, հարցաթերթիկի լրացման անհրաժեշտությունը:

Հարցաթերթիկը ներառում է երեք հարց՝ «այո», «ոչ» կամ «մասամբ» կարճ պատասխաններով: Հարցաթերթիկը լրացրել է ընդհանուր առմամբ 18 ուսանող: Առաջին հարցին՝ տեղեկացված եք արդյոք Ձեզ վերաբերող խորհրդատվական ծառայությունների մասին, հարցմանը մասնակցած ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» պատասխանը: Երկրորդ հարցին՝ ընդգրկված եք արդյոք լրացուցիչ խորհրդատվական ծառայություններում, ուսանողների 94,4 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը: Երրորդ հարցին՝ բավարարված եք արդյոք կենտրոնում գործող խորհրդատվական ծառայություններից, ուսանողների 94,4 տոկոսը տվել է «այո» պատասխանը:

Հարցմանը մասնակցած ուսանողների կողմից առաջարկներ չեն ներկայացվել:

**«ՀՈՒՄԿ» ԿՀ Կարիերայի և մասնագիտական զարգացման կենտրոնի աշխատանքների վերաբերյալ անցկացրած հարցման վերլուծություն**

ՄՈՒՀ-ում արդեն 15 տարուց ի վեր գործում է Կարիերայի և մասնագիտական զարգացման կենտրոնը, որի նպատակն է ուսանողներին մասնագիտական օժանդակություն և ուղղորդում տրամադրել, նպաստել և աջակցել աշխատանքի տեղավորմանը, ուղղորդել մասնագիտական զարգացման ճանապարհին: Ըստ այդմ, ուսանողության 2017-2018 ուստարվա երկրորդ կուրսի ուսանողների շրջանում անց է կացվել հարցում՝ պարզելու թե որքանով են վերջիններս տեղեկացված այդ ծառայությունից և ինչ բարելավումներ են հնարավոր անել էլ ավելի բարելավելու ուղղությամբ:

Ուսանողներին բաժանվել է նախապես մշակված և հաստատված հարցաթերթիկ, ներկայացվել է Կարիերայի կենտրոնի կանոնակարգն ու աշխատանքների էությունը, հարցաթերթիկի լրացման անհրաժեշտությունը:

Հարցաթերթիկը ներառում է չորս հարց՝ «այո», «ոչ» կամ «մասամբ» կարճ պատասխաններով: Հարցաթերթիկը լրացրել է ընդհանուր առմամբ 18 ուսանող: Առաջին հարցին՝ տեղեկացված եք արդյոք ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների մասին, հարցմանը մասնակցած ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» պատասխանը: Երկրորդ հարցին՝ երբևէ օգտվել եք այդ ծառայություններից՝ ուսանողների 55,5 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը: Երրորդ հարցին՝ կարիերայի կենտրոնի աշխատակիցների օգնությամբ արդյոք գտել եք աշխատանք, ուսանողների 50 տոկոսը տվել է «այո» պատասխանը: Չորրորդ հարցին՝ ընդհանուր առմամբ բավարարված եք այդ ծառայություններից, ուսանողների 94,4 տոկոսը տվել է «այո» պատասխանը:

Հարցմանը մասնակցած ուսանողների կողմից առաջարկներ չեն ներկայացվել:

**«ՀՈՒՄԿ» ԿՀ Ուսումնական միջավայրի վերաբերյալ անցկացրած հարցման վերլուծություն**

Մեր ուսումնական հաստատությունն ապահովում է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր՝

շենք, համակարգչային լաբորատորիա, ուսումնական լսարաններ, գրադարան, անհրաժեշտ մասնագիտական գրականություն:

Ըստ այդմ, 2017-2018 ուստարվա երկրորդ կուրսի ուսանողների շրջանում անց է կացվել հարցում՝ պարզելու թե որքանով են վերջիններս բավարարված այդ ծառայություններից և ինչ միջոցներ են հնարավոր ձեռնարկել էլ ավելի բարելավելու ուղղությամբ:

Ուսանողներին բաժանվել է նախապես մշակված և հաստատված հարցաթերթիկ, ներկայացվել է ուսումնական միջավայրի բնութագիրը, դրանցից ուսանողների օգտվելու իրավունքը, կանոնակարգերն ու ժամանակացույցը, հարցաթերթիկի լրացման անհրաժեշտությունը:

Հարցաթերթիկը ներառում է վեց հարց՝ «այո», «ոչ» կամ «մասամբ» կարճ պատասխաններով: Հարցաթերթիկը լրացրել է ընդհանուր առմամբ 18 ուսանող: Առաջին հարցին՝բավարարված եք արդյոք կենտրոնի շենքային պայմաններից, հարցմանը մասնակցած ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը: Երկրորդ հարցին՝ բավարարված եք արդյոք համակարգչային լաբորատորիայի ծրագրային ապահովվածությունից, ուսանողների 94,4 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», իսկ 5,5 տոկոսը՝ «ոչ» պատասխանը: Երրորդ հարցին՝ բավարարված եք արդյոք ուսումնական լսարանների պայմաններից, ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը: Չորրորդ հարցին՝ բավարարված եք արդյոք կենտրոնի գրադարանի ծառայություններից, ուսանողների 94,4 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», 5,5 տոկոսը տվել է «ոչ» պատասխանը: Հինգերորդ հարցին՝ արդյոք կենտրոնի գրադարանը ձեզ ապահովում է անհրաժեշտ ուսումնական նյութերով և դասագրքերով՝ ուսանողների 94,4 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ», 5,5 տոկոսը տվել է «ոչ» պատասխանը: Վեցերորդ հարցին՝ բավարարված եք արդյոք սանհանգույցների մաքրությունից՝ ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը:

Հարցմանը մասնակցած ուսանողների կողմից առաջարկներ չեն ներկայացվել:

**«ՀՈՒՄԿ» ԿՀ Վարչական ծառայությունների վերաբերյալ անցկացրած հարցման  
վերլուծություն**

Մեր ուսումնական հաստատությունը, նպատակ ունենալով ապահովել կրթական ծրագրերի իրականացման բարձր որակ, սահմանել է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց: Ըստ այդմ, ուսանողության 2017-2018 ուստարվա երկրորդ կուրսի ուսանողների շրջանում անց է կացվել հարցում՝ պարզելու թե որքանով են վերջիններս տեղեկացված այդ ծառայությունից և ինչ միջոցներ են հնարավոր ձեռնարկել էլ ավելի բարելավելու ուղղությամբ:

Ուսանողներին բաժանվել է նախապես մշակված և հաստատված հարցաթերթիկ, ներկայացվել է Վարչական աշխատակազմի ծառայությունների բնութագիրը, դրանցից օգտվելու հստակ կանոնակարգն ու ժամանակացույցը, հարցաթերթիկի լրացման անհրաժեշտությունը:

Հարցաթերթիկը ներառում է չորս հարց՝ «այո», «ոչ» կամ «մասամբ» կարճ պատասխաններով: Հարցաթերթիկը լրացրել է ընդհանուր առմամբ 18 ուսանող: Առաջին հարցին՝ տեղեկացված էք արդյոք Ձեզ վերաբերող վարչական ծառայությունների մասին, հարցմանը մասնակցած ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» պատասխանը: Երկրորդ հարցին՝ օգտվում էք արդյոք այդ ծառայություններից, ուսանողների 88,8 տոկոսը տվել է «այո» կամ «մասամբ» պատասխանը: Երրորդ հարցին՝ Ձեր ուսումնառության ընթացքում ծագել են արդյոք խնդիրներ, ուսանողների 88,8 տոկոսը տվել է «ոչ» պատասխանը: Չորրորդ հարցին՝ բավարարված էք արդյոք կենտրոնի վարչական ծառայություններից, ուսանողների 100 տոկոսը տվել է «այո» պատասխանը:

Հարցմանը մասնակցած ուսանողների կողմից առաջարկներ չեն ներկայացվել:

**Դասախոսների ինքնավերլուծության թերթիկների վերլուծություն**



«Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն» կրթական հիմնադրամը պարբերաբար երկու տարի տևողությամբ «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտության մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերում դասավանդող դասախոսների շրջանում իրականացնում է ուսումնական կիսամյակի գործունեության ինքնավերլուծություն՝ գրավոր տարբերակով: Հարցման նպատակն է վեր հանել «ՀՈՒՄԿ» ԿՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության և դասավանդման գործընթացի հետ կապված թերացումների և թերությունների վերհանումն ու դրանց ուղղությամբ բարելավման աշխատանքների կատարումը:

Ըստ այդմ՝ 2018թ. հունվար ամսին պրոֆեսորադասախոսական անձնակազմի շրջանում իրականացվել է գրավոր հարցում՝ պարզելու իրենց դասավանդած առարկայի ամբողջական նկարագրությունը:

«ՀՈՒՄԿ» ԿՀ ուսումնական մասի և որակի ապահովման կենտրոնի կողմից համատեղ մշակվել է հարցաթերթիկ, վերջինս հաստատվել է ուսումնական գծով փոխտնօրենի կողմից:

Հարցաթերթիկում ներառված հարցերի միջոցով փորձել ենք բացահայտել մեր ուսումնական հաստատությունում դասավանդման ընթացքում ծառայած խնդիրները, թերությունները և դրանց շտկման ուղղությամբ մասնագետների առաջարկած մեթոդներն ու քայլերը:

Հարցաթերթիկները անվանական են, յուրաքանչյուր դասախոս լրացնում է իր անձնական տվյալները և դասավանդած առարկայի անունը:

Հարցմանը մասնակցել են Կենտրոնի 2017-2018 ուստարվա առաջին և երկրորդ կուրսերում /առաջին կիսամյակ/ դասավանդող դասախոսները:

Յուրաքանչյուր առարկայի դասախոս նախ ներկայացրել է իր դասավանդման ընթացքում կիրառված մեթոդները: Հիմնականում, որպես մեթոդներ, նշված են խմբային և անհատական աշխատանքները, պրեզենտացիաները, քննարկումները, պրակտիկ խնդիրների լուծումները, թեստային առաջադրանքները, դասախոսությունները:

Որքանով է հաջողվել իրականացնել դասընթացի առջև ծառայած խնդիրները հարցին, դասախոսների մեծ մասը պատասխանել է, որ առարկայական ծրագրով նախատեսված թեմաներն ամբողջովին ներկայացվել են ուսանողներին, յուրացվել են վերջիններիս կողմից, բարեհաջող կերպով հանձնվել են ընթացիկ ստուգումներն ու ստուգարքները:

Դասավանդման ընթացքում նկատված թերություններից դասախոսները նշել են հետևյալները՝ ուսանողները քիչ ժամանակ են հատկացնում տնային հանձնարարություններին, մաթեմատիկական և նախնական մասնագիտական գիտելիքների պակասը, ուսանողների ակտիվ ներգրավվածությունը քննարկումներին:

Դասավանդման ընթացքում նկատված թերություններից դասախոսները նշել են հետևյալները՝ համակարգչային ծրագրերի թերի իմացություն, որոշ տեխնիկական միջոցների բացակայությունը, ուսանողների ակտիվ ներգրավվածության պակասը, ուսումնական նյութերի ընդլայնումը, դասաժամերի պակասը:

Հարցմանը մասնակցել են Կենտրոնի 2017-2018 ուստարվա առաջին և երկրորդ կուրսերում /երկրորդ կիսամյակ/ դասավանդող դասախոսները:

Որքանով է հաջողվել իրականացնել դասընթացի առջև ծառայած խնդիրները հարցին, դասախոսների մեծ մասը պատասխանել է, որ առարկայական ծրագրով նախատեսված թեմաներն ամբողջովին ներկայացվել են ուսանողներին, յուրացվել են վերջիններիս կողմից, ուսանողները կարողանում են լուծել տնտեսագիտական բովանդակությամբ խնդիրներ, տիրապետում են ֆինանսատնտեսական գործառնությունների ձևակերպումներին: Նկատված թերությունները և բացթողումները նոր ուսումնական տարում շտկելու միջոցներից դասախոսները ներկայացրել են հետևյալները. ուսանողներին ակտիվորեն ներգրավվել խմբային խաղերում, ուղղորդել դեպի անհատական և ինքնուրույն աշխատանքների կատարում, օտար լեզվի ժամերին հնարավորինս խոսել անգլերեն, կազմակերպել լրացուցիչ դասընթացներ մաթեմատիկական գիտելիքների ամրապնդման համար:

«ՀՈՒՄԿ» ԿՀ ուսումնական մասը և ՈԱԿ-ը պատրաստակամ են ուսումնառության որակի և դասավանդման մեթոդների բարելավման ուղղությամբ

քայլեր մշակել, ուշադրություն դարձնել դասախոսների կողմից ներկայացված առաջարկներին, քննարկել վերջիններս, հետևել դրանց իրականացմանը:

Հաշվետվությունը պատրաստեց «ՀՈԻՄԿ» ԿՀ Որակի ապահովման կենտրոնի  
պատասխանատու՝ Ա. Առաքելյան